# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Օգոստոսի 5-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Վարդավառի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Օգոստոսի 11-ին, շաբաթ.- Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի ըստ տեսլեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աշոտ աբղ. Մնացականյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

**Օգոստոսի 12-ին, կիրակի.- Վերափոխումն Սուրբ Աստուածածնի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Պատարագիչ Սրբազան Հայրը «Հայր մեր»-ից առաջ «Ով զերահրաշ ծաղիկ բուրեալ յեդեմայ, հոտ անմահութեան» (Շարական) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

**Օգոստոսի 13-ին, երկուշաբթի.- Մեռելոց:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մատթեոս աբղ. Պողոսյանը:

**Օգոստոսի 19-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Վերափոխման:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշեն աբղ. Սանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Զարթի՛ր, ընդե՞ր ննջես: Արի եւ մի մերժեր զմեզ իսպառ» (Ժամագիրք) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

**Օգոստոսի 26-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Վերափոխման: Տօն գիւտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գրիգոր աբղ. Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: